ունիմք առնել · Դատաւորն ամբաստանել կամէր զՀայս իբրև զապերախտ · զի հրաման տայր երթալ ըստ առաջնոյն 'ի Ս · Աստուածածին , յորմէ արգելեալ էին Յոյնք հրովարտակաւ , ոչ յիշելով զՋնջումն նորին և զնորն · և սպառնայր գրել 'ի Դուռն ամբաստան լինելով իբրեւ զանհնազանդից հրամանի Արքային , և կարի ընդդիմանալ նոցին՝ նախատել և անարգել զնոսա , և ոչ տալ թոյլ մտանել 'ի Սուրբ Աստուածածին և 'ի Ս · Ծնունդ , թէեւ Արքայ հրովարտակաւ հրամայեսցէ · ընդ այս ցասուցեալ Նուրի Էֆէնտեայ կշտամբէր զնա՝ զի լաւ է առէր տալ Իլամդ մեզ քան Հայոց , զի մեկնեսցուք աստի , զի ոչ երեւի 'ի քեզ հնազանդութիւն Արքայի , այլ կամակորութիւն և պաշտպանութիւն , զմին բարձրացուցանել և զմիւսն առնել կոխան ոտից · և 'ի սաստկանալ վիճման և խռովութեան 'ի մէջ երկոցունց՝ ցրուեցաւ ժողովն ։ Հայք աղաչէին զԴատաւորն և միջնորդ կացուցանէին զԽօճաքեանն և զԲաղաքապետն , այլ նա տատանեալ մտօք վարանէր 'ի խորհուրդս իւր · խոստմունք Յունաց , պահանջ Հայոց և գործակալաց , և երկիւղ Թագաւորին ցնորեալ էին զմիտս նորա ։ Հայք թախանձէին տալ զԱյրն Ծննդեան և զբանալի հիւսիսային դրան , որոյ հետեւիլ ունէր ճանապարհ երթեւեկելոյ , զի ոչ էր ընդդէմ օրինաց · և եկեղեցին այն չէր սեփհական Յունաց , այլ գեղջ · եւ նոքա առեալ էին 'ի ձեռաց Լատինաց ։ Այլ խօժոռեալ նորա մերժէր զբանս Հայոց՝ հայեցեալ 'ի տհաճութիւնս Յունաց , զի յանձն առարին առէ օրինաց իմոց , որոյ վասն անկարելի է ինձ բաժանորդ առնել զձեզ Բեթղեհէմի և Ս · Աստուածածնի , յայս բան ծիծաղէին այլազգիք ամենեքեան · հանդերձապետ Դատաւորին Եամանտի քաջալերէր զնա 'ի կողմանէ Յունաց , չհակիլ 'ի կողմն Հայոց , եւ գործակալքն նկատէին 'ի հեռուստ ։ Վերստին առաքեցին առ նա Հայք զարս հաւատարիմս և յորդորէին կատարել զգործն , գուցէ եկեալ Ոստիկան Կուսակալին 'ի հարկէ կատարեսցէ , եւ ինքն վիրաւորեսցի · այլ նա յառաջ բերէր զգիր Կուսակալին , զգանկատանս իւր զՈստիկանէն , թէ առաջի բազմութեան նախատեաց զնա , և զսաստ Փաշային առ Ոստիկանն , եւ զչդառնալ նորա անդրէն յԵրուսաղէմ , զի ոչ